1. «Միդիա-Շանգալ» եզդիների ազգային միավորում» հասարակական կազմակերպության կանոնադրության նպատակները (առարկան) և խնդիրները բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ.

2.1 «Կազմակերպության գործունեության (առարկան) ու խնդիրներն են՝ օրենքով սահմանված կարգով» 23-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ՝

- աջակցել ՀՀ-ում ազգային փոքրամասնությունների մասին օրենքի ընդունմանը,
- աջակցել ՀՀ-ում ազգային փոքրամասնությունների հարցով զբաղվող պետական մարմնի աշխատանքներին ավելի արդյունավետ դարցնելու համար,
- Հայաստանի Հանրամպետության հեռուստատեսության և ռադիոյի վերաբերյալ օրենքում կատարել փոփոխություններ ազգային փոքրամասնություններին եթերային ժամերի տրամադրելու վերաբերյալ,
- իրականացնել մարդու իրավունքների պաշտպանություն՝ մասնավորապես ազգային փոքրամասնությունների,
- միավորել եզդիների հասարակական կազմակերպությունները ստեղծելով (ասոցիացիա),
- ստեղծել համաշխարհային եզդիների կենտրոն,

2. Կանոնադրության «Կազմակերպության կառավարման կարգը» բաժնի «7.6» կետում ավելացնել ժգ/ ենթակետ հետևյալ բովանդակությամբ.

ժգ/ Խորհուրդը ընտրում է կազմակերպության պատվավոր նախագահ:

Սույն փոփոխություն և լրացումը հանդիսանում է «Միդիա-Շանգալ» եզդիների ազգային միավորում» հասարակական կազմակերպության կանոնադրության (գրանցված ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից 04.02.2011թ.) անբաժանելի մասը:

Սույն փոփոխությունը կազմված է 15.03.2013թ.